

Վ Ա Ր Ա Ն Դ Ա ^{*)}

Խմբագրեց Ե. ԼԱՆՏԵԱՆ.

ՆՁԵՆԵՐԻՈՐ ՏՕՆԵՐ

Նոր-տարի.—Վարանդայի գիւղերում նոր տարին գրեթէ բոլորովին չի տօնուում։ Բագուից վերադարձածները միայն այցելում են միմեանց և իրենց բարեկամներին ու նրանց նոր տարին շնորհաւորում։ Շուշում, ընդհակառակը, բոլոր քաղաքացիները միմեանց փոխադարձ այցելութիւններ են տալիս, խմբովին գնում են առաջնորդի և գաւառապետի մօտ, նրանց նոր տարին շնորհաւորելու։

Ժնունդ եւ Զրօրհնէք.—Խթման նախընթաց օրը, յունուարի 4-ին, ամեն տուն սլատրաստում է «գովլաթ-կըրկենէ», ձիթով կամ բաքմազով պատրաստած մի մեծ կարկանդակ, մէջը մի դրամ, կամ մի լորի և կամ մի սիսեռ դրած։ Այս նշանը կոչւում է «գովլաթ» (բազդ)։ Նոյն երեկոյին, ընթրիքից յետոյ տան բոլոր անդամները համախմբւում են և տան տիկինը հանգիստւոր կերպով կտրում է կարկանդակը, բաժիններ հանելով բոլոր ներկայ և բացակայ անդամներին, օջախին, օտարին և կենդանիներին։ Ուրախութիւնը շատ մեծ է լինում, երբ գովլաթը զուրս է գալիս օջախի բաժ-

^{*)} Տես Ազգագրական Հանդէս Բ. գիրք էր. 4—244.

նից, որովհետեւ դրանից գուշակում են, որ այդ տարի ամբողջ գերգաստանը, օջախը, բախտաւոր, «գովլըթուր» պիտի լինի: Իսկ եթէ օտարի բաժնի միջից է գուրս գալիս, տխրում են, համոզուած լինելով, որ տան դովլաթը օտարին է անցնելու: Ուրտխանում է նաեւ այն անդամը, որի բաժնի միջից գուրս գալով դովլաթը՝ աւետում է նրան ապագայ բախտաւորութեան մասին:

«Դովլաթ» կորիզը ձգում են տան մի անկիւնում, որ միշտ մնալ, իսկ եթէ դրամ է՝ երբէք չեն ծախսում և քրոսկի մէջ խնամքով պահում են:

Հետեւեալ օրը շատերը ծոմ են պահում: Երեկոյեան «Դանիէլ» աստղը մեծ գովասանքների է արժանանում և իւր ծնողներից նուէրներ ստանում: Ժամերգութիւնից յետոյ շատ շուտով ցրւում են տները և ընթրում, ուտելով ձուկ և փաւ, որը պատրաստում են անպատճառ կարագ իւղով: Ընթրիքից յետոյ գրագէտ երեխաները շրջում են տները և «Աւետիս» ասելով՝ նուէրներ ժողովում:

Դիւղացիները հաւատում են, թէ այս գիշերուայ ընթացքում գետը մի քանի րոպէ կանգ է առնում, ուստի և՛ առաւօտ շատ վաղ հարսներն ու ազգիկները գնում են գետից ջուր բերելու, լուսալով հանգիպել կանգնած միջոցին, երբ արուած ամենայն տեսակ խնդիր անմիջապէս կատարւում է:

Կէս օրին, երբ քահանան կատարում է Քրիստոսի մըկրտութեան խորհուրդը, եկեղեցու մէջ հրապարակով աճուրդի է դրւում քաւորութեան պաշտօնը և նա է դառնում քաւոր, որը ամենից աւելի է վճարում:

Բազմութիւնը վրայ է թափւում մկրտութեան կաթսայի վրայ և սրուակներով ջուր վերցնում, խմում, ճակատին ու կրծքին քսում, ձեռները, ամանները լուանում և ջուրը լցնում օճախի կամ թոնրի մէջ:

Նոյն օրը, ինչպէս և նախընթաց երեկոյին, քահանան շրջելով տները, օրհնում է և նշխարներ բաժանում, ստանտ-

լով 15—20 կոպէկ: Նշխարներէց մի կտոր դնում են աղաքսակի մէջ, որ աղը «բարաքեաթով» լինի:

Սուրը Սարգիս.—Առաջաւորաց պասին վարանդացիները «Խաշլին կամ սուրը Սարգսին պասն» են կոչում: Այս միջոցին շատերը միաժողով են մնում, այսինքն օրը միայն մի անգամ, կէսօրին են հաց ուտում: Շատ յաճախ եկեղեցի են գնում, մոմեր վառում և զգուշանում գլուխ լուանալուց և լուացք անելուց, ոտով հետև անողները կուռչին, կտրաքուն:

Ուրբաթ օրը փոխինդ են մաղում, լետոյ շաքարով, կամ մեղրով և կամ բաքմազով շաղախում և փոքրիկ, կոլորակ շինում և բաժանում տան անդամներին: Զափահաս տղաները ու աղջիկները առաջին կծած պատառը բերաններից հանում, կրկին կոլորում և պահում են իրենց մօտ, որպէսզի հետևեալ առաւօտը վաղ, առանց մի որևէ մարդու հետ խօսելու՝ դնեն կտուրը և գուշակութիւններ անեն: Եթէ թռչունը վերցնի և տանի մի որևէ կտրի վրայ ուտի՝ այն անից է լինելու հարսնացուն կամ փեսացուն: Իսկ եթէ թռչունը վերցնելով այդ պատառը միևնայն կտրի վրայ ուտի, այդ նշան է, որ չպիտի ամուսնանան:

Նոյն ուրբաթ գիշերը մի ափսէի մէջ փոխինդ են մաղում, վերան խաչ քաշում, գնում գռան լետեր, մաղը վրան կոնթիւում և մի վառած մոմ մօտը դնում, որպէսզի ս. Սարգիսը իրենց այցելելիս ձիու պայտի հետքը մնայ փոխինդի վրայ:

Հետևեալ շաբաթ օրը այդ փոխինդով խաշիլ են պատրաստում և ուտում:

Ս. Սարգսի մասին կան շատ աւանդութիւններ, որոնցից լիշենք մինը.—

Մի անգամ մի աղջիկ իւր ծննդկան մօր մօտից հեռանալով գնում է դրկցի մօտ կրակ բերելու: Վերադարձին գուռը փակ է գտնում և ականջ դնելով լսում է մի ձայն, որ ասում էր թէ նորածին երեխան մեծանալիս երբ կամենայ ամուսնանալ, ձուկ դառնայ և ջուրն ընկնի: Աղջիկն իս-

կոյն հասկանում է, որ այս ձայնը այն հրեշտակինն էր, որ եկել էր երեխայի ճակատի գիրը գրելու:

Երբ երեխան մեծանում է և հասնում են ամուսնութեան օրերը, այս քոյրը պահում է ս. Սարգսի պատը և ջերմեռանդութեամբ ազօթում նրան, որ փրկէ իւր եղբօրը և թոյլ չտայ ձուկ դառնալու: Ս. Սարգիս լսում է նրա աղաչանքը և ինքը գալիս խաչեղբայր է դառնում այդ տղային: Երբ հարսը բերում են, մի գետից կամենում են տնցնել. իսկոյն ս. Սարգիսը հեծնում է փեսացուի գաւակը և ամուր գրկում նրան, որ թոյլ չտայ ձուկ դառնալու, սակայն չի լինում. տղան, հէնց որ գետի մէջտեղն են հասնում, ձուկ է դառնում և ընկնում ջուրը: Այսպէս՝ ճակատի գիրը ոչ միայն մարդիկ, այլ և սրերբը, հաստատում է ժողովուրդը, չեն կարող խափանել:

Բարեկենդան.—Առաջաւորաց պատից մինչև Մեծ պատը վարանդացիների համար բարեկենդան է համարւում, և քէֆն ու ուրախութիւնը գնալով սաստկանում են: Վերջին շաբաթը բուն բարեկենդան է, և այս օրերում ոչ միայն ուրախութիւնը, այլ և կերակուրների թիւը գնալով աճում է. այսպէս՝ պահանջւում է՝ որ երեքշաբթի օրը երեք, հինգշաբթի՝ հինգ, շաբաթ՝ եօթը և կիրակի՝ 12 տեսակ կերակուր լինի: Ամբողջ գիւղը զանազան խմբեր կազմած՝ զուարճանում է. այստեղ երեխաների խմբերը վէգ են խաղում, այնտեղ տղիկների խումբը ճլորթիի մէջ ճօճում է, մի քիչ հեռուն երիտասարդները «լախտի», «տարատութ», «տոտուրմա» և այլ խաղեր են սարքում, զօտեմարտում, հրացան արձակում, աշխատելով նշանին գիպցնել և այլն: Մի ուրիշ տեղ մի խումբ նստած ուտում է և խմում, բզուռում ու երգում: Գիւղի կենտրոնումն էլ դաւուլ զուռնան է տծում և շատերին պար տծում: Այսպէս անցնում են այս օրերը մինչև որ գալիս է կիրակի օրը. այս ժամանակ երիտասարդների խմբերը միանում են, մի ճարպիկի հագնում ցնցոտիներ, վերայից ոսկոռներ, հին սրեր կախում, մի հրացան ձգում ուսովը, գլխին մի հին, գզգզուած գլխարկ ծածկում, երեսը

մրոտում, նստեցնում մի էգ էշի վրայ, և բէակը կամ էշակ պարոնը գալիս է հա, ճամփայ բացէք՝ բղաւելով՝ դաւուլ գուռնի առաջնորդութեամբ ման ածում տնէ տուն, հագարաւոր ծամածռութիւններ, սրախօսութիւններ անում, ամեն տնից գինի, կերակուր, դրամ հաւաքում և ապա, երեկոյեան մօտ, խմբով նստում և քէֆ անում:

Նոյն երեկոյին մօտիկ բարեկամները ի միասին հաւաքուած են անցկացնում գիշերը, միասին ուրախանալով և ուտելով իրենց աներից բերած ուտելիքէններն ու կերակուրները: Երբ անչափ ուտում են ու խմում, պիտկում են իրենց բերանները ձուով, այսինքն ամենից վերջը ձու են ուտում, սրպէսզի գատկին էլ ձուով բանան: Յետոյ երիտասարդները դուրս են գալիս և հրացաններ արձակում, որպէսզի մեծ պասը շուտով անցնի: Ապա յօգնած ու հարբած՝ ընկնում են ու խոր քնում:

Տեսնոնըղաուաջ. — Այս տօնը տեղական բարբառով կոչւում է գագառաջ:

Երեկոյեան ժամերգութեան միջոցին նշանած տղաների բերած ցրտնու ճիւղերով խաշաձե խարոյկ են պատրաստում: Քահանան ժամաւորների հետ միասին դուրս է գալիս եկեղեցուց և միքանի աղօթքներ կարդում: Այս միջոցին երիտասարդները վառուած մօմերով վառում են խարոյկը: Ծերունիներն ու պառաւները աւելի ջերմեւանդութեամբ շարունակում են աղօթել: Բազմութիւնը ամենայն հետաքրքրութեամբ դիտում է ծուխը, որովհետև հաւատում է, որ միայն այն կողմի արտերը լու պիտի բուսնեն, որ կողմը որ ուղղւում է ծուխը:

Երբ խարոյկը հանգչում է, խանձողները խլիւլում են և տանում աները, որպէսզի նրանով վառեն ճրագն ու կրակը և լեալ գնեն հաւաքնում, որ հաւերն աւելի լաճախ ձու ածեն:

Եւ երբ մեծերը քաշւում են, տղաներն ու աղջիկները վերցնում են մօխերը և գէպի վեր շաղ տալիս ու դիտում,

թէ ո՞ր կողմն է ուղղոււմ, յուսալով որ այն կողմից պիտի լինի սպասած հարսնացուն կամ փեսացուն:

Զբերք կանայք էլ աշխատում են երեք անգամ թռչել խարոյկի վրայից, որպէսզի երեխայ ունենան:

Ընծ Պառ.— Առաւօտեան վաղ հարսներն ու աղջիկները վեր են կենում և անխօս վազում գէպի աղբիւրը, ջուր բերում, տղաներն էլ գնում են փայտ կամ քար բերում, որովհետեւ հաւատում են, որ եթէ բան բերեն տուն, տունը տրաքեաթ թուռ կլինի:

Պառաւ նանն էլ մի սօխի վրայ 7 փետուր ամրացնելով՝ կախում է հերթիկից, որ թէ երեխաներին վախեցնէ պաս պահելու, և թէ իբր մեծ պասի օրացոյց ծառայի, որովհետեւ ամեն կիրակի երեխաները մի փետուրը պոկում են:

Մի քիչ լեւոյ երեխաները մի-մի խնձոր ձեռներին գրնում են իրենց մեծերին մեծ պասը շնորհաւորելու և տալիս են նրանց խնձորները. սրանք էլ փոխադարձաբար մի որեւէ միւրք են ընծայում:

Եւ մինչդեռ կանայք զբաղւում են տան ուտիսաւոր ամանները լուսլով՝ տղամարդիկ գնում են տանուտիրոջ, քահանայի և մօտիկ բարեկամների մեծ պասը շնորհաւորելու:

Կէս օրին մօտ երիտասարդները ձիեր նստած գուրս են գալիս մի հարթ տեղ և մականախաղ (ջիլիթ) խաղում:

Երեկոյեան մօտ միայն Խաչմաչ գիւղում մի էշ են թամքում, մի կին նստեցնում վերան, երեսին մուր քսում, գուրու գուռնայի առաջնորդութեամբ շրջեցնում տնէ տուն և գրամ հաւաքում: Յետոյ այս գրամը պահ են տալիս, որ զատկին մատաղ անեն: Այս սեւերես կինը ներկայացնում է մեծ պասը և նրան պատուով շրջեցնում են, որպէսզի մեծ պասը առանց փորձանքի անցնի:

Մեծ պասի առաջին շաբաթը ապաշխարութեան օրեր համարելով՝ ծանր գործերով չեն զբաղւում. այսպէս՝ կանայք ճախարակ չեն մանում, կար չեն անում, շալ չեն գործում և այլն: Երկրորդ շաբաթի առաջի երեք օրն էլ զգուշանում են ծանր աշխատանքներից, երկուշաբթին զգալ

կերածի և կատաղած շան, երեքշաբթին «սել (հեղեղ) տա-
րածի» և չորեքշաբթին «կայծակ խփածի» օր համարելով:
Այնպէս որ՝ եթէ չգզուշանան և երկուշաբթի օր ծանր գործ
անեն, գալլը կուտէ գրանց երեխաներին և կամ կատաղած
շունը կկծէ գրանց և այլն:

Ծաղկազարդ.— Ծաղկազարդ բառը գիւղացիների բերա-
նում աղաւաղուելով դարձել է «Զըրգարգար»: Սույն երեկոյ-
ին շատ գիւղերում աղշիկները ձեռքերին հինալ են դնում,
իսկ տղաները պատրաստում են ճըռււան և չըխ չըխ կան *):
Պառաւներն էլ իրենց հարսերի և թոռների համար մոմեր
են շինում, միւսնոյն մոմի վրայ ուրիշ բարակ մոմեր ամրա-
ցնելով:

Երբ այս բոլորը պատրաստում են, փոքր ինչ քնում
են: Կէս գիշերին մօտ երիտասարդները վեր են կենում, բաձ
ու թի վերցնում և գնում երկու ուռենի արմատից հանում
և առանց մի ճիւղ կտրելու տանում եկեղեցու բակը: Այս
ժամանակ երեխաներն էլ հաւաքւում են այդտեղ և սկսում
իրենց ճռււանով ու չըխ չըխանով այնպիսի աղաղակ բարձ-
րացնել, որ ամբողջ գիւղն զարթնում է և եկեղեցի շա-
պում: Երիտասարդները վազում են դէպի քահանայի տան
հերթիկը և շտապեցնում, որ գալ: Քահանան գալիս է, խըփ-
ւում են զանգակները և բազմութիւնը միմեանց հրելով
թափւում է եկեղեցի: Ուռենիներից մինը տանում եկեղեցու
մէջ մարդկանց, միւսը կանանց կանգնելու տեղում կանգնե-
ցնում են: Անմիջապէս բոլոր ժամաւորները իրենց ձեռի երկու
զոյգ մոմերից մի զոյգը ամրացնում են ծառերի ճիւղերին և
վառում: Երեխաներն էլ ծառերը չըջապատած՝ ճըռււանն
ածում: Եւ երբ քահանան օրհնում վերջացնում է ուռենին,
անմիջապէս բոլորը յարձակւում են այս ծառերի վրայ, մի

*) Սրանցից առաջինը նոյն է, ինչ որ Զաւթեցունը, (Աղգ-
Հանդէս բ. եր. 269), երկրորդը մի համեմատաբար երկար տախտակի
երկու կողմերին հաստ թելով ամրացրած երկու փոքրիկ տախտակ-
ներ են, որոնք խփուելով միջի փայտին՝ չըխի, չըխի ձայն են հա-
նում:

կողմից մոմերը հանգցնում, միւս կողմից ճիւղերը կտրտում և միմեանցից խլիխում։ Այս ճիւղերը տանում տնկում են, որ շուտով արմատ բռնեն։

Մի ճիւղ էլ կանալք վերցնում պահում են, որպէսզի խնոցի հարեւիս նրա պոռնքից (ծակից) կոխեն խնոցու մէջ և տեսնեն, թէ կարագն արգէն եղել է, թէ ոչ։ Այս ճիւղը կոչւում է «խնցտեսի»։

Ժամասացութիւնը աւարտելուց լետոյ կանալք գնում են գերեզմանատուն, համբուրում իրենց ննջեցեալների գերեզմանները և մի-մի զոյգ մոմ վառում։ Այս ժամանակ նոր սկսում է արշալոյսը բացուել և այս բազմաթիւ մոմերը մըթութեան մէջ փայլելով մի գեղեցիկ տեսարան են ընծայում։

Չարչարանաց շաքաթ.—Չորեքշաբթի օրը, որ չիք չորեքշաբթի է կոչւում, Մուշեցիները գնում են Մուշու Քամու խաչը ուխտ։ Գիւղերում կանալք գնում են տան կտրին երկու քար, մինը որպէս բարութեան, միւսը որպէս չարութեան նշանակի։ Հետեւեալ օրը մի երեխայի ուղարկում են, որ գնայ նրանցից մինը բերէ։ Եւ նայելով թէ որն է բերել, գուշակում են, թէ տունը «բարին է վերցնում, թէ չարը», այսինքն թէ գերդաստանը այդ տարին երջանիկ թէ թըշուառ օրեր պիտի անցկացնի։

Նոյն օրը աղջիկները խաշխաշ հարելու քարը քսում են գետնին և ասում.

«Չիք, չիք, մոկնը չիք.

Չիք, չիք, լուն չիք.

Չիք, չիք, կարիճը չիք.

Չիք, չիք, չարակամը չիք.

Չիք, չիք, օձը չիք» և այլն։

Այս ասելով նրանք կարծում են, որ այս բոլոր լիշաճները պիտի չքանան։

Հինգշաբթի օրը կանալք խնոցի են հարում և կարագ պատրաստում, երեկոյին երբ երեցփոխը զանգը խփում է, գալիս կանգնում է մի բարձր կտրի վրայ և հրաւէր կարգում տանտիկիներին, որ օրհնելու համար իւր բերեն։ Կա-

նայք էլ մի-մի գունտ կարագ առած գնում են եկեղեցի և տալիս երեսփոխին։ Սրանից մի փոքր մասը օրհնում են, մնացածը ուղարկում քահանայի տունը։ Ոտնալուսին քահանան լուսնում է բոլոր ծերունիների ոտները և կանանց, չափահասների ու երեխաների աջ ձեռքերը և մի-մի քիչ կարագ քսում։ Այս իւրը քսում են ճակատին, ձեռքին, կրծքին, աչքերին և այլն։ Մի քիչ էլ ձգում իւրի կարասի մէջ, որ իւրը բարաքեաթովս լինի։

Գիշերը մեծ բազմութիւն է հաւաքւում եկեղեցում, ուր մոմերն անցկացնելիս բաւական անկարգութիւններ են լինում։ Չարահճի երիտասարդները կարում են կնքուարտող կանանց զգեստները միմեանց, ասեղ են ցցում շորերին և այլն։

Նոյն երեկոյին օսկերիչները անխօս շինում են երկաթի մատանիներ, որ կանայք գնում և գնում են մատները, որպէսզի մութ տեղերից անցնելիս ստատանները չխփեն։

Ուրբաթ օրը կանայք մի քիչ կար են անում, որպէսզի Յուդայի աչքերը ծակեն, ծունր չեն գնում, որովհետեւ Յուդան է գետնին, և Քրիստոս խաչին, չեն խաչակնքում, որովհետեւ Քրիստոս ինքն է խաչուած։

Շաբաթ օրը շատ վաղ լուացք են անում, կանայք իրենց և երեխաների գլուխները լուսնում են և երեկոյեան մօտ մաքուր շորեր հագնում։ Տանտիկիւնները սկսում են պատրաստել ձուկ, փլաւ և կարմիր ձուեր։ Քահանան տիրացուի ձեռք մի զամբիւղ տուած շրջում է տունէտուն և օրհնում, ստանալով մի քանի կոպէկ և ձու։ Երեկոյեան նախատօնանքը շատ վաղ է սկսւում։ Ժամուրներից շատերը ծոմ են լինում, միջանիսն էլ գրպաններում միջանի ձու պահած։ Երբ քահանան շնորհք կերէք է պսում, իսկոյն նոյն իսկ եկեղեցու մէջ կալում են ձուերը և ուտում։ Յետոյ անմիջապէս վերադառնում են տուն, ուր իրենց պատը ձուով ու գինով բանալով՝ ընթրում են։ Սովորաբար ջրօրհնէքը ճրագի լուսով (ճրուգիւսաւ), իսկ զատիկը արևի լուսով (ըրըւլուսաւ) են լուծում։

Ընթրիքից լետոյ և միւս օրը շարունակ ոչ միայն երեխաները, այլ և չափահասները ձու են կուլացնում:

Զատիկի առաւօտեան տնում են հասարակաց մատաղ: Միքանի նախաձեռնող մարդկանց գիւղացիներից հաւաքած զրամով տնում են միքանի ոչխարներ և մատղում: Մորթելուց առաջ ոչխարին երեք անգամ պտտեցնում են եկեղեցու շուրջը, աջ ականջը փոքր ինչ կտրում, օրհնութեամբ աղուտեցնում և ապա մորթում ու արիւնից էլ միքիչ եկեղեցու պատին քսում: Երբ պատրաստ է լինում, բաժանում են բոլոր գիւղացիներին առանց խարուստի, մինչդեռ Շուշում տալիս են միայն նրանց, ովքեր որ լատուկ այդ նպատակով նուէր տալով՝ տոմսակ են ստացել և ներկայացնում են:

Նշանած աղջիկների կերասանքը բաժին են ուղարկում իրենց հարսնացուներին և լետոյ էլ իրենք գնում նրան տեսութեան: Ծանօթ և ազգական մարդիկ էլ գնում են միմեանց գատիկ շնորհաւորելու:

Հետեւեալ օրը, մեռելոցին, ամեն մի գերգաստան ու տեղիքներ է տանում գերեզմանատուն, ուր իրենց ննջեցեալների գերեզմանների վրայ լաց են լինում և գինի, օղի խմում, իբրև չօղորմաթաս և հաց ուտում: Երբ վերադառնում են, մնացորդները թողնում են գերեզմանների վրայ, որպէս հոգեբաժին:

Զատիկից մինչև համբարձում երեկոյեան ժամասացութիւնից լետոյ այլ ևս չեն գործում, որպէսզի «հաւկուր» չլինին, այսինքն չգրկուին չիջերները տեսնելու կարողութիւնից: Երկրագործներն էլ ուրբաթ օրերը հերկ չեն անի, որպէսզի հասկը լաւ բուսնի:

Համբարձում.—Այս օրում բոլոր տներում կաթնապուր են եփում, և բաժանում, որպէս զոհաբերութիւն: Միքանի տներ էլ տանում արտերի մօտ են եփում այս կաթնապուրը և միքանի շերեփ շաղ տալիս արտի շուրջը, որպէսզի նախ հունձը լաւ լինի և երկրորդ՝ կարկուտը չխփի, մարեխը չկտրի և այլն:

Վիճակ հանելու սովորութիւնը չկայ:

Լուսատուրչի պատը գալիս է ամառուայ ամենատաք ժամանակ, երբ գիւղացիները սաստիկ զբաղուած են հունձ անելով: Վարանդացիները այդ պատին պառաւի պատն են կոչում և պատմում են, թէ ժամանակով մի պառաւ, այդ շաբթին պատ է պահել, որպէսզի Աստուած հով եղանակ տայ, որ որդին հեշտութեամբ կարողանայ հունձ անել: Մի ուրիշ աւանգուծիւն էլ ասում է, թէ այդ պատը պահուած է ի պատիւ այն պառաւին, որ օրական մի հաց ձգելով Խոր-Վիրապի մէջ՝ կերակրել է ս. Լուսատուրչին:

Վարդապառ.—Այս տօնին կոչում են պրզեորն: Ժողովուրդը մեծ մասամբ ուխտ է գնում Սարուշէնի Աւետարանը, Ամարաս, Նինգի գիւղի ս. Գրիգոր Լուսատուրիչ, Սարիբէկ և այլն:

Ժողովրդի կարծիքով այս գիշեր բոլոր սրբերի վրայ լոյս է իջնում, և ով որ տեսնի այդ լոյսը՝ ինչ-որ խնդրէ՝ կրկատարուի:

Ոմանք էլ պատմում են, թէ հոգեգալստեան բոլոր սրբերը բարձրանում են երկինք, իսկ վարդապառին կրկին իջնում իրենց տեղերը, ընդունելով լուսաւոր աստղերի կերպարանք: Եւ ով որ տեսնի նրանց իջնելիս և մի բան խնդրէ՝ անշուշտ կրկատարուի:

Նաւասարդ.—Վարանդացիները տօնում են այս տօնը որպէս տարեմուտ, ինչպէս մեր նախնիքը: Նախընթաց երեկոյին թխում են զաթաներ, կաթնահունց, շանկած և այլ խմորեղէններ: Պատրաստում են նաեւ պորկոտ^{*)}, առաւօտեան ուտելու:

Նոյն երեկոյին, երբ ամենքը իրենց տները քաշուած

*) Կորկոտը ալսպէս են պատրաստում. մի կաթսայի մէջ դնում են ոչխարի իւղոտ միս, վերան կորկոտ (կենպը հանած ցորեն) ածում, ապա մի երկրորդ շաբթ իւղոտ միս դարսում, նորից կորկոտ ածում, և ալսպէս շարունակ, մինչև որ կաթսան բոլորովին լցուի: Յետոյ մի քիչ աղ են ցանում, ջուր լցնում և ծածկելով կաթսայի բերանը՝ դնում թոնրի մէջ, որ մարմանդ կրակով ամբողջ գիշերը եփուի:

ընթրում են, բարեկամ մարդիկ, մանաւանդ խնամոնք, քաւորանք, ընկուզ, տանձ, խնձոր կապելով թաշկինակների մէջ՝ տանում են հարսնացուի և կամ բարեկամ մարդկանց հերթիկից ցած ձգում և աննկատելի կերպով հեռանում:

Նաւասարդի առաւօտեան հանում են կորկոտները և ուտում: Յետոյ մի-մի շիշ գինի, միքանի խնձոր առած գնում են շնորհաւորելու տանուտիրոջ և քահանայի նաւասարդը, որոնցից և հիւրասիրւում են:

Նստերը ի նշան ուրախութեան ծառերի վրայ կարմիր ջորեր, կարմիր կտորներ են ձգում և կարմիր թելերով ճիւղերը կապկապում *):

Ե. Լալայեան.

Հարգելի իմ հաւաքած նիւթերից, ինձ համար տարբեր գիւղերից նիւթեր հաւաքեցին և պ. պ. Ալլահվերդեան, Վարդապետեան, Յովհաննիսեան և ուրիշներ, որոնց շնորհակալութիւն եմ յայտնում:

*) Բացի իմ հաւաքած նիւթերից, ինձ համար տարբեր գիւղերից նիւթեր հաւաքեցին և պ. պ. Ալլահվերդեան, Վարդապետեան, Յովհաննիսեան և ուրիշներ, որոնց շնորհակալութիւն եմ յայտնում: